

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

«Անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի ձևավորման կարգն ու ժամկետները, ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացվող հաշվետվությունները» կանոնակարգ 7-ը և «Անվճարունակ բանկի և վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագրի ձևը» հաստատելու մասին*

Հիմք ընդունելով «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետը, 42-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետը, 8-րդ հոդվածի 1-ին մասը, 17-րդ հոդվածի 1-ին մասը, 39-րդ հոդվածի 3-րդ մասը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «ժ» ենթակետերով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է** .

1. Հաստատել «Անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի ձևավորման կարգն ու ժամկետները, ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացվող հաշվետվությունները» կանոնակարգ 7-ը՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

** Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2002 թ. դեկտեմբերի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.02.03 թ.
(ՀՀԳՏ N5, 3.02.03):
Ներառված են ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 295-Ն (26.08.03), 280-Ն (09.11.04)
որոշումներով ընդունված փոփոխություններն ու լրացումները:*

2. Հաստատել «Անվճարունակ բանկի և վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագրի ձևը»՝ համաձայն հավելված 2-ի (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 13-ի «Բանկերի սնանկացման ընթացակարգի մասին» կանոնակարգ 7-ը հաստատելու վերաբերյալ» թիվ 7 որոշումը:

4. Սահմանել, որ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ բանկերի ժամանակավոր ադմինիստրացիա նշանակելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դինոմի հիման վրա բանկի լուծարային կառավարիչ նշանակելու դեպքում ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարը և լուծարային կառավարիչը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 7 որոշմամբ հաստատված «Բանկերի սնանկացման ընթացակարգի մասին» կանոնակարգ 7-ով խնամակալի համար սահմանված որակավորման չափանիշներին:

5. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բանկային մեթոդաբանության և վերլուծությունների վարչությանը՝ եռամսյա ժամկետում մշակել և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի հաստատմանը ներկայացնել՝

- ա) անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների գնահատման հատուկ կարգի նախագիծ,
- բ) անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ծախսերի, հասույթների, պարտավորությունների կազմի, չափերի և ֆինանսական ծրագրում սահմանված ծրագրային ցուցանիշներին հասնելու կանխատեսումների վերաբերյալ հաշվետվության ձև:

6. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի, նախագահի տեղակալի, խորհրդի աշխատակազմին՝

- ա) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից եռամսյա ժամկետում կազմակերպել սույն որոշման 1-ին կետով հաստատված կանոնակարգ 7-ի անգլերեն և ռուսերեն պաշտոնական թարգմանությունն ու հրատարակումը,

բ) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում կազմակերպել սույն որոշման 1-ին կետով հաստատված կանոնակարգ 7-ի ենթահավելված 1-ում տրված՝ բանկի և վարկային կազմակերպության ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի մասնագիտական որակավորման վկայականի ձևի տպագրումը՝ 50 օրինակից:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
26 դեկտեմբերի 2002 թ., N 402-Ն***


Հավելված

Հաստատված է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի

2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 402-Ն որոշմամբ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 7



**ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ԱՂՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ,
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՂՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի (այսուհետև՝ ադմինիստրացիա) ձևավորման կարգն ու պայմանները, ադմինիստրացիայի ղեկավարի թեկնածուին ներկայացվող պահանջները, սահմանափակումները, ադմինիստրացիայի ղեկավարի մասնագիտական որակավորման վկայականների տրամադրման կարգն ու պայմանները, ինչպես նաև անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական առողջացման հետ կապված այլ հարաբերություններ:

2. Անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական առողջացման ընթացակարգը կարգավորվում է «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով, սույն կանոնակարգով, անվճարունակ բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագրով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ կենտրոնական բանկ) այլ իրավական ակտերով:

**ԳԼՈՒԽ II. ԲԱՆԿԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՊԱՐՏԱԴԻՐ
ՊԱՂՈՒՍՏԱՎՈՐՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԻ ԽԱՒՏՄԱՆ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

3. [Ուժը կորցված է ճանաչվել 77 ԿԲ խորհրդի թիվ 295-Ն որոշմամբ (ընդունված է 2003 թ. օգոստոսի 26-ին. 77ԳՏ N 24, 15.10.03)]:

4. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը 3 (երեք) անվաժանական հատվածում 3 (երեք) անգամ խախտելու դեպքում բանկը ճանաչվում է անվճարունակ՝ «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետով սահմանված անվճարունակության հիմքով:

5. Վարկային կազմակերպությունը ճանաչվում է անվճարունակ, եթե առկա է «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կամ «բ» կետերով սահմանված անվճարունակության հիմքերից որևիցե մեկը:

5¹. Բանկը համարվում է անվճարունակ, եթե սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը կամ ավելին:

Բանկի հիմնական կապիտալի 50 տոկոսը կամ ավելին ապառված է համարվում, եթե տվյալ անվաժան նրա միջին հիմնական կապիտալի մեծությունը փոքր կամ հավասար է եղել այդ անվան նախորդող 12 ամիսների միջին հիմնական կապիտալի կեսին:

**ԳԼՈՒԽ III. ԱՊՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՁԵՎՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ
ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

6. «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անվճարունակության հիմքերից որևիցե մեկը բացահայտելու, ինչպես նաև սույն կանոնակարգի 10-րդ կետում նշված պայմաններից մեկի կամ մի քանիսի առկայության դեպքում Կենտրոնական բանկը եռօրյա ժամկետում նշանակում է ադմինիստրացիայի ղեկավար, որը տասնմեկօրյա ժամկետում ձևավորում է երեք հոգուց բաղկացած ադմինիստրացիա,

եթե Կենտրոնական բանկի իրավական ակտով ադմինիստրացիայի անդամների այլ թվաքանակ սահմանված չէ:

7. Կենտրոնական բանկի կողմից ադմինիստրացիայի ղեկավարի նշանակման պահից ադմինիստրացիայի ղեկավարն իրականացնում է անվճարունակ բանկի կամ վարկային կազմակերպության ակտիվների և պարտավորությունների գույքագրումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2001 թվականի մարտի 21-ի թիվ 79 որոշմամբ հաստատված և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ համաձայնեցված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ակտիվների և պարտավորությունների գույքագրման կարգի», իսկ գնահատումը՝ Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի համաձայն:

Ադմինիստրացիայի ղեկավարը անվճարունակ բանկի կամ վարկային կազմակերպության ակտիվների և պարտավորությունների գնահատման և «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իր վրա դրված խնդիրների իրագործման նպատակով կարող է իր կողմից իրականացվող աշխատանքներին ներգրավել (այդ թվում՝ Կենտրոնական բանկից) իրավաբաններ, աուդիտորներ, հաշվապահներ և այլ մասնագետներ:

8. Սույն կանոնակարգի 7-րդ կետում սահմանված գնահատման արդյունքում ադմինիստրացիայի ղեկավարը բանկի կամ վարկային կազմակերպության անվճարունակության հիմքերը բացահայտելու պահից երկշաբաթյա ժամկետում Կենտրոնական բանկի խորհրդին է ներկայացնում կարճ ժամանակահատվածում բանկի կամ վարկային կազմակերպության կողմից կապիտալի տեսքով ֆինանսական միջոցների ներգրավման, չաշխատող ակտիվների վերականգնման, ակտիվների մասնակի վաճառքի, ակտիվների և պարտավորությունների միաժամանակյա վաճառքի, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ գլխով սահմանված կարգով բանկի գործունեության տեսակի փոփոխման հնարավորության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բանկային և ֆինանսական համակարգերի վրա բանկի կամ վարկային կազմակերպության լուծարման հնարավոր ազդեցության մասին եզրակացություն:

9. Գնահատման արդյունքների հիման վրա ադմինիստրացիայի ղեկավարը մշակում է անվճարունակ բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագիրը և այն

ներկայացնում Կենտրոնական բանկի խորհրդի հաստատմանը՝ մինչև «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված երկշաբաթյա ժամկետի ավարտը:

10. Կենտրոնական բանկի խորհուրդը նշանակում է ադմինիստրացիա և հաստատում բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագիրը, եթե՝

ա) ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացված եզրակացությամբ և ֆինանսական առողջացման ծրագրի նախագծով հիմնավորվում է բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման հնարավորությունը, և (կամ)

բ) բանկի կամ վարկային կազմակերպության լուծարմամբ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի ամբողջությամբ վերցրած միասնականությունը և սահունությունը չի պահպանվի, և (կամ)

գ) ադմինիստրացիայի՝ «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված խնդիրների իրագործման միջոցով հնարավոր է առավելագույնս բավարարել բանկի կամ վարկային կազմակերպության պարտապանների պահանջները և (կամ) նվազագույնի հասցնել ավանդների երաշխավորման հիմնադրամի ծախսերը, և (կամ)

դ) հնարավոր է «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ, 22-րդ կամ 23-րդ հոդվածներով սահմանված միջոցառման (միջոցառումների) իրականացման միջոցով ֆինանսապես առողջացնել բանկը կամ վարկային կազմակերպությունը: Ընդ որում, բանկի կամ վարկային կազմակերպության մասնակիցների և (կամ) այլ անձանց ֆինանսական օգնությունը կամ լրացուցիչ ներդրումները պետք է իրականացվեն բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման պահից եռամսյա ժամկետում, կամ այդ ժամկետի ընթացքում պետք է բանկի կամ վարկային կազմակերպության մասնակիցների և (կամ) այլ անձանց և Կենտրոնական բանկի միջև ձեռք բերվի համաձայնություն՝ ֆինանսական օգնության և (կամ) լրացուցիչ միջոցների ներդրման մասին:

11. Ադմինիստրացիայի ղեկավարը Կենտրոնական բանկի խորհրդի հաստատմանն է ներկայացնում ադմինիստրացիայի և ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման մասին Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշումների նախագծեր, կցելով նաև՝

- ա) ադմինիստրացիայի անդամների թեկնածուների անձնական տվյալները,
- բ) համապատասխան հիմնավորումներ՝ անձանց որպես ադմինիստրացիայի անդամների թեկնածուներ ներկայացնելու վերաբերյալ,
- գ) ֆինանսական առողջացման ծրագիրը,
- դ) սույն կանոնակարգի 8-րդ կետով սահմանված եզրակացությունը:

Ընդ որում, անվճարունակ ճանաչված բանկը կարող է փոփոխել իր գործունեության տեսակը վարկային կազմակերպության բացառապես այն դեպքում, երբ կապիտալը և ֆինանսական այլ ցուցանիշները բավարարում են Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպություններին ներկայացվող պահանջներին:

ԳԼՈՒԽ IV. ԱՂՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Անվճարունակ բանկի ադմինիստրացիայի ղեկավարը մինչև յուրաքանչյուր շաբաթվա երկրորդ աշխատանքային օրվա վերջը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացնում նախորդ շաբաթվա սառեցված պարտավորությունների և արտարժութային դիրքերի վերաբերյալ հաշվետվությունները: Ֆինանսական առողջացման ծրագրով սահմանվում են ֆինանսական առողջացման կանխատեսվող միջոցառումների և ֆինանսական առողջացման միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվությունները, դրանց ներկայացման հաճախականությունը:

12.1. Սահմանել ֆինանսական առողջացման կանխատեսվող միջոցառումների վերաբերյալ հաշվետվության օրինակելի ձևը՝ ըստ ենթահավելված 4-ի (կցվում է):

12.2. Սահմանել ֆինանսական առողջացման միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվության օրինակելի ձևը՝ ըստ ենթահավելված 5-ի (կցվում է):

**ԳԼՈՒԽ V. ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿ ԲԱՆԿԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ**

13. Անվճարունակ բանկի կամ վարկային կազմակերպության հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվները սահմանվում են ֆինանսական առողջացման ծրագրով:

14. Հիմնական կամ հատուկ տնտեսական նորմատիվները խախտելու դեպքում անվճարունակ բանկը կամ վարկային կազմակերպությունը պատասխանատվություն է կրում «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ գլխով և «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլխով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ VI. ԱՐՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ

15. Ադմինիստրացիայի ղեկավարի մասնագիտական որակավորման ստուգումն իրականացնում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով):

16. Ադմինիստրացիայի ղեկավարի մասնագիտական որակավորման ստուգման համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր ունեն բարձրագույն կրթություն և լիցենզավորման համար դիմելու օրվան նախորդած վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարի աշխատել են որպես կազմակերպության ղեկավար, ղեկավարի տեղակալ կամ վարել են կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության կազմակերպման ու ղեկավարման հետ կապված այլ պաշտոններ, կամ տնտեսագիտության կամ իրավագիտության բնագավառում կատարել են մասնագետի, գիտական աշխատողի աշխատանք:

**ԳԼՈՒԽ VII. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՏՈՒԳՄԱՆԸ
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՆՉՐԱԺԵՇՏ ԴԱՅԱՆՋՆԵՐԸ**

17. Մասնագիտական որակավորման ստուգմանը մասնակցելու համար դիմորդը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

- ա) դիմում՝ նշելով դիմողի ազգանունը, անունը, անձնագրի սերիան ու համարը, բնակության վայրն ու հեռախոսահամարը, դիմումին կից փաստաթղթերի ցանկը,
- բ) աշխատանքային գրքույկի պատճենը կամ սույն կանոնակարգի 16-րդ կետում նշված պահանջները հավաստող համապատասխան փաստաթուղթ,
- գ) կենսագրական տվյալներ,
- դ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- ե) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից տրված՝ անվճարունակ կազմակերպությունների անվճարունակության գործերով կառավարչի լիցենզիայի պատճենը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի միջնորդագիրը (ներկայացվում է միայն այդ լիցենզիան ունեցող դիմորդների կողմից):

18. Դիմորդը իր ներկայացրած փաստաթղթերում տեղ գտած սխալների համար և իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների համար կրում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

ՉԼՈՒԽ VIII. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

19. Սույն կանոնակարգի 17-րդ կետում նշված փաստաթղթերը Կենտրոնական բանկ մուտք լինելու օրվանից ոչ ուշ, քան 15 օր հետո, հանձնաժողովն իրականացնում է դիմորդի մասնագիտական որակավորման ստուգումը:

20. Մասնագիտական որակավորման ստուգման նպատակով դիմորդը (բացառությամբ՝ սույն կանոնակարգի 21-րդ կետով նախատեսված դիմորդների) պատասխանում է տեստային հարցերին: Տեստային հարցաշարը բաղկացած է 70 հարցից, որոնցից 30-ը իրավաբանական, իսկ 40-ը տնտեսագիտական ոլորտին վերաբերող հարցեր են: Տեստային հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխան զնահատվում է մեկ բալ: Մասնագիտական որակավորման ստուգումն անցկացվում է համակարգչի միջոցով, ընդ որում, տեստի յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար հատկացվում է միջին հաշվով 1,5 րոպե:

21. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից տրված՝ անվճարունակ կազմակերպությունների անվճարունակության գործերով կառավարչի լիցենզիա և Հայաստանի Հանրապետության արդարադատության նա-

խարարի միջնորդագիր ունեցող հավակնորդներին տրվում է բանկի և վարկային կազմակերպության ադմինիստրացիայի դեկավարի պաշտոնում աշխատելու համար որակավորման և մասնագիտական համապատասխանության վկայական՝ հանձնաժողովի նիստում անցկացված հարցազրույցի հիման վրա:

22. Մասնագիտական որակավորման ստուգման տեստային հարցաշարի կազմմանը վերաբերող հարցերը և թեմաները ենթակա են «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում» պարտադիր հրապարակման՝ ստուգման օրվանից ոչ ուշ, քան 1 ամիս առաջ:

23. Մասնագիտական որակավորման ստուգման անցկացման օրվա, ժամի և տեղի մասին դիմորդին պատշաճ ձևով տեղեկացվում է նշված ստուգման անցկացումից առնվազն յոթ օր առաջ:

24. Դիմորդը համարվում է մասնագիտական որակավորման ստուգումն անցած, եթե նա առնվազն 65 տեստային հարցերի պատասխանել է ճիշտ:

25. Դիմորդին պատշաճ ձևով տեղեկացվում է մասնագիտական որակավորման ստուգման արդյունքների մասին՝ դրա անցկացումից ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում: Դիմորդին արդյունքների վերաբերյալ սույն կետով սահմանված ժամկետում չտեղեկացնելու դեպքում դիմորդը համարվում է որակավորված:

26. Մասնագիտական որակավորման ստուգմանը մասնակցությունը մերժվում է, եթե՝

- ա) դիմորդի ներկայացրած փաստաթղթերում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ,
- բ) ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կանոնակարգի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին,
- գ) դիմորդն իրավունք չունի զբաղվել հայցվող գործունեության տեսակով,
- դ) դիմորդի տվյալները չեն բավարարում սույն կարգի 16-րդ կետի պահանջներին:

ԳԼՈՒԽ IX. ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

27. Մասնագիտական որակավորման ստուգման արդյունքը սույն կանոնակարգի 24-րդ կետի պահանջին համապատասխանելու դեպքում դիմորդին տրվում է մասնագիտական որակավորման վկայական՝ ձևը ըստ ենթահավելված 1-ի: Մասնագիտական որակավորման վկայականը տրվում է 3 (երեք) տարի ժամկետով:

Հավելված 2

**«Անվճարունակ բանկի և վարկային կազմակերպության
ֆինանսական առողջացման ծրագրի ձևը» հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի
դեկտեմբերի 13-ի թիվ 402-Ն որոշմամբ**

**ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿ ԲԱՆԿԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

**ԳԼՈՒԽ I. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐԸ**

1. «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը « _____ » թվականի « _____ » հաստատելու մասին թիվ « _____ » որոշմամբ « _____ » բանկում (կամ վարկային կազմակերպությունում) (այսուհետև՝ բանկ) նշանակել է ժամանակավոր ադմինիստրացիա (այսուհետև՝ ադմինիստրացիա):

2. «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխի պահանջներին համապատասխան, սույն ծրագիրը նպատակ ունի ադմինիստրացիայի գործունեության ընթացքում ապահովել բանկի ֆինանսական կայունության և վճարունակության վերականգնումը, ինչպես նաև բանկի կամ վարկային կազմակերպության պարտատերերի պահանջների առավելագույն բավարարումը:

3. «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, սույն ծրագիրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հաստատվելուց հետո ադմինիստրացիան գործում է «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հա-

յաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան և կրում է նշված օրենքով ամրագրված բոլոր իրավունքներն ու պարտականությունները:

4. Սույն ծրագրի գործողության ժամկետը սահմանվում է _____ (շաբաթ, ամիս, տարի), և նշված ժամկետի հաշվարկը սկսվում է սույն ծրագիրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ հաստատվելու պահից:

5. Բանկի ադմինիստրացիան իր գործունեությունն իրականացնում է սույն ծրագրի պահանջներին համապատասխան:

ԳԼՈՒԽ II. ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

6. Այս գլխում տրվում են՝

- ա) բանկի ակտիվները, այդ թվում՝ դրամական միջոցները, պետական արժեթղթերը, զուտ վարկային ներդրումները, զուտ հաշվարկված տոկոսները, հիմնական միջոցները, այլ ակտիվներ: Նշվում են այն վարկային ներդրումները, որոնք ենթակա են դասակարգման՝ որպես անհուսալի, վարկային ներդրումների կառուցվածքը, խոշոր վարկերի մարման ժամկետները և ադմինիստրացիայի կողմից դրանց գնահատականները:
- բ) Բանկի պարտավորությունները, այդ թվում՝ ռեզիդենտ ֆիզիկական անձանց գծով, ռեզիդենտ իրավաբանական անձանց գծով, միջազգային ծրագրերի գծով, ռեզիդենտ բանկերի գծով և այլ պարտավորություններ:
- գ) Առ _____ ամսաթիվը բանկի ծանուցման հաշիվներում հաշվառվող դուրս գրված վարկերը, տոկոսները, դեբիտորական պարտքերը:

ԳԼՈՒԽ III. ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆԸ

7. Բանկի մասնակիցների, այդ թվում՝ նոր մասնակիցների կողմից տրամադրվող միջոցները, կարող են ուղղվել բանկի կանոնադրական հիմնադրամի (կապիտալի) համալրմանը կամ այն

ակտիվների վերականգնմանը, որոնց արժեզրկմամբ է պայմանավորված բանկի ֆինանսական վիճակի վատթարացումը: Ներդրման կոնկրետ եղանակը որոշում է ադմինիստրացիան՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ: Այլ անձանց մասնակցության եղանակները բանկի ֆինանսական վիճակի վերականգնման հարցում որոշում է ադմինիստրացիայի ղեկավարը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ:

8. Ըստ անհրաժեշտության, հաշվի առնելով կոնկրետ բանկի առանձնահատկությունները, նշվում են ներդրողները, նրանց հետ կնքվելիք գործարքի պայմանները, ընթացակարգը, ներդրման չափը, դրա արդյունքում ակնկալվող բանկի ֆինանսական վիճակի փոփոխությունները:

ԳԼՈՒԽ IV. ԲԱՆԿԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

9. Ադմինիստրացիան պարտավոր է իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ վարչական ծախսերի կրճատման ուղղությամբ՝ դրանց ամսական սահմանաչափերը հասցնելով հետևյալ մեծություններին.

հազար դրամ

- | | |
|---|--|
| 1 | Աշխատավարձի և դրա գծով հաշվարկված հարկերի և պարտադիր այլ վճարների ծախսեր |
| 2 | Հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին |
| 3 | Գործուղման ծախսեր |
| 4 | Կապի և հաղորդակցման ծախսեր |
| 5 | Պահպանության ծախսեր |
| 6 | Կոմունալ ծախսեր |
| 7 | Գրասենյակային և տնտեսական ծախսեր |
| 8 | Փոխադրամիջոցների սպասարկման և պահպանման ծախսեր |
| 9 | Այլ ծախսեր |

Ընդամենը

10. Ֆինանսական առողջացման ծրագրով կարող է սահմանվել, սույն գլխով նախատեսված ծախսային հոդվածներում խնա-

յողություններ ունենալու դեպքում, այդ խնայողությունների օգտագործման կարգը, ուղղությունները:

11. Բանկը իրավունք ունի դատական ակտերի հարկադիր կատարման մարմինների կողմից աճուրդային կարգով վաճառվող գույքը գնել՝ գործարքի պայմանները նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ:

ՔՆՈՒԽ V. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՏԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

12. Սույն ծրագրի գործողության ընթացքում նախատեսվում է օտարել բանկի սեփականություն հանդիսացող գույքը՝ ըստ անհրաժեշտության, ընդ որում, առաջնահերթ պետք է վաճառվի այն գույքը, որը ուղղակիորեն կապված է բանկի գործունեության հետ:

13. Կարող է կցվել այն գույքի ցանկը, որը պարտադիր ենթակա է օտարման կամ հանձնարարական տալ ադմինիստրացիայի ղեկավարին՝ որոշակի ժամկետում ներկայացնել վաճառքի ենթական գույքի ցանկը, որը կհաստատվի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից՝ որպես ֆինանսական առողջացման ծրագրի անբաժանելի մաս:

14. Գույքի իրացումը պետք է իրականացվի երկու տարբերակով.

ա) ուղղակի վաճառք,

բ) հիմնական միջոցների զիջում (փոխանցում) պարտատերերին՝ բանկի նկատմամբ վերջիններիս պահանջների դիմաց Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ նախապես համաձայնեցված պայմաններով:

ՔՆՈՒԽ VI. ՏԱՐԱԺԱՄԿԵՏ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴԵՔԻՏՈՐՎԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՉՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

15. Նշվում են ադմինիստրացիայի իրավունքները ակտիվների որակի բարելավման և միջոցների ավելի հեշտ հավաքագրման ու պարտավորությունների ավելի արագ կատարման նպատակով պահանջի իրավունքի զիջման և պարտքի փոխանցման գործարքներ կնքելու վերաբերյալ, ինչպես նաև այդ գործարքների ուղղությունները, հետևյալ ձևերով՝

- ա) վարկային պայմանագրերից և այլ պահանջներից բխող իրավունքների ուղղակի վաճառք՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ նախապես համաձայնեցված պայմաններով,
- բ) իրավաբանական, ինչպես նաև ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային պարտավորությունների դիմաց բանկի վարկային պայմանագրերից և այլ գործարքներից բխող պահանջի իրավունքների զիջում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ նախապես համաձայնեցված պայմաններով,
- գ) օրենքով սահմանված կարգով իրավաբանական, ինչպես նաև ֆիզիկական անձանց նկատմամբ ունեցած ցպահանջ և ժամկետային պարտավորությունների փոխանցում այլ անձանց: Ընդ որում, եթե պարտքի փոխանցումը կատարվում է բանկի վարկային պայմանագրերից և այլ պահանջներից բխող իրավունքներից (ակտիվներից) բավարարում ստանալու պայմանով, ապա նման գործարքի պայմանները ևս նախապես համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ:

ԳԼՈՒԽ VII. ԲԱՆԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

16. Ադմինիստրացիայի գործունեության և սույն ծրագրի գործողության ընթացքում բանկի կառավարման բոլոր մարմինների լիազորությունները կասեցվում են և ամբողջությամբ անցնում ադմինիստրացիայի ղեկավարին: Բանկի ադմինիստրացիան ողջ ծավալով իրականացնում է բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի, խորհրդի և գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և բանկի կանոնադրությամբ նախատեսված լիազորությունները սույն ծրագրի լիարժեք իրականացման համար:

17. Բանկի ադմինիստրացիայի անդամները, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարները գործում են ադմինիստրացիայի ղեկավարի հանձնարարականների հիման վրա:

18. Բանկը գործում է սույն ծրագրով հաստատված կազմակերպական կառուցվածքի հիման վրա (կցվում է կազմակերպական կառուցվածքը):

19. Այս գլխում կարող են նշվել նաև «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ ադմինիստրացիայի ղեկավարի կառավարչական (ադմինիստրատիվ) գործառույթների բաշխման կարգը ադմինիստրացիայի անդամների միջև՝ սահմանելով ադմինիստրացիայի անդամներից յուրաքանչյուրի կառավարման ոլորտները, դրանց հետ կապված լիազորությունները, իրավունքները, պարտականությունները: Սույն կետով նախատեսվածի վերաբերյալ ֆինանսական առողջացման ծրագրում չեն նշվում ղեկավարի ադմինիստրացիայի ղեկավարի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ադմինիստրացիայի անդամների միջև լիազորությունների բաշխման վերաբերյալ որոշում է կայացնում:

20. Ելնելով բանկի ֆինանսական առողջացման անհրաժեշտությունից՝ բանկի կազմակերպական կառուցվածքը կարող է փոփոխվել հետևյալ ձևերով՝

- ա) բանկի աշխատակիցների թվաքանակի և կազմի փոփոխությամբ,
- բ) բանկի կառուցվածքի փոփոխությամբ,
- գ) բանկի տարածքային կամ կառուցվածքային ստորաբաժանումների լուծարմամբ:

**ԳԼՈՒԽ VIII. ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ
ԿԱՊԻՏԱԼԻ ԲԱՎԱՐԱՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ, ԱՅԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

21. Սույն ծրագրի հաստատման պահից բանկը դուրս է գալիս «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տնտեսական նորմատիվների կարգավորման դաշտից և գործում է ֆինանսական առողջացման ծրագրով սահմանված նորմատիվների կարգավորման դաշտում:

**ԳԼՈՒԽ IX. ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՍԻՎՆԵՐԻ
ՎԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ
ՆԿԱՏԱՍԲ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

22. Ծրագրի հաստատումից հետո ադմինիստրացիան _____ օրվա ընթացքում հաշվարկում է սույն ծրագրի հաստատման օրվա դրությամբ բանկի հաշվեկշռում, ինչպես նաև արտահաշվեկշռում արտացոլված կամ բանկին ներկայացված հիմնավորված պահանջների ընդհանուր գումարը, յուրաքանչյուր պարտատիրոջը հասանելիք գումարի չափը և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

23. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից պահանջների ցանկին համաձայնություն տալու դեպքում նշված ցանկով ամրագրված բանկի պարտավորությունները համարվում են լրիվ և սպառիչ, չեն կարող որևէ կերպ ավելացվել, բացառությամբ սույն ծրագրով նախատեսված դեպքերի:

24. Արգելվում է փոփոխել ցանկացած պայմանագրով տոկոսների, միջնորդավճարների և այլ փոխհատուցումների չափը, եթե նման փոփոխությունները ավելացնում են բանկի ծախսերը կամ պարտավորությունները, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թույլատրվող դեպքերի:

25. Ադմինիստրացիան իրավունք ունի կատարել հակընդդեմ պարտավորությունների հաշվանցներ, ցանկացած ներբանկային վճարումներ՝ սույն ծրագրով նախատեսված դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով:

26. Իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ պարտավորությունները կատարելիս հիմք են ընդունվում ժամկետների վերաբերյալ գործարքի պայմանները, այդ թվում՝ սույն ծրագրի հաստատումից հետո ձեռք բերված համաձայնությունների մասով:

27. Ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ ժամկետանց պարտավորությունների կատարումը ըստ պարտատերերի առանձին խմբերի և գումարների թույլատրվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, որով և վերացվում է այդ պարտավորությունների կատարման նկատմամբ սահմանված մորատորիումը:

28. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կարող է թույլատրվել պարտատերերի առանձին խմբերի գծով տոկոսների հաշվարկումը և վճարումը՝ նույն որոշմամբ սահմանված պայմաններով:

